Պարույր Սևակ

Անվերնագիր 4

Ժայռերն ի վեր դանդաղ մագլցում է ճամփան
Ու հասնելով լեռան սեգ կատարին՝
Հոգնած ճամփորդի պես կանգ է առնում մի պահ,
Պառկում շվաքի տակ ծեր անտառի:
Եվ բացվում է իմ դեմ, իմ աչքերի առաջ
Իմ հայրենի գյուղը - այնտեղ՝ ցածում:
Քնաթաթախ գյուղի տանիքներից ելած
Երդիկների ծուխն է ծո՛ւյլ հորանջում:
Գետակն, աղբյուրների չարաճճի որդին,
Թավալվում է ձորում ու փրփրրում.
Նրա ժայռոտ ափին ավերակը բերդի
Իր հին պաշարումն է մտաբերում...
Նախիրը բառաչելով դաշտ է գնում հիմա,
Այգիներում, հոգնա՛ծ, ջուրը հուն է գտնում...
Բաց է մեր դռնակը կարոտ գրկի նման,
Եվ ես - կրկի՛ն մանուկ - մեր հին տունն եմ մտնում:

24.V.1946թ.
Երևան